

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-2-1-Ա

ք. Երևան

11.03.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի մարտի 11-ի նիստում քննարկեց 2020 թվականի փետրվարի 19-ին «Հելթի ֆարմ» ՍՊԸ-ի (Երևան, Խորենացի 33) կողմից ներկայացված բողոքը (№20190686) «ԱՆԱՀԻՏ» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում նիշի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա ավելի վաղ պահպանվող «ANAHIT, AHANT, ԱՆԱՀԻՏ» («Կովկասֆուդ» ՍՊԸ, Երևան, Գ. Նժդեհի փ., 56/2, N23396, 19.03.2015թ.) և «ԱՆԱՀԻՏ» («Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, N 9413, 08.06.2005, N 21791, 18.04.2014) բառային և համակցված ապրանքային նշանների նկատմամբ: Կարգի 119-րդ կետի 1-ին և 2-րդ կետերի, 122-րդ կետի 1-9-րդ ենթակետերի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել՝ բառային ապրանքային նշանները և համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում նման տարր է համարվում «ԱՆԱՀԻՏ» բառը, որն ամբողջությամբ ներառված է գրանցված ապրանքային նշաններում:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի կողմից բողոքի նախնական քննարկման արդյունքները՝

բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ ներկայացված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա ավելի վաղ պահպանվող ապրանքային նշաններին, որոնց մեջ ներառված է «ԱՆԱՀԻՏ» պահպանվող բառը:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր, որ ներկայացված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Հելթի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «ԱՆԱՀԻՏ» (No20190686) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ